

ղիկէ դաւանութեան թուղթ տուած էր, Եգիպտոսի շայոյ մէջ կաթողիկէութիւն տարածած, եւ այս պատճառաւ իր Աթուէն մերժուած (տ. նաեւ Davidian, Aperçu, Cairo 1910, էջ 7, որ այս նամակն 1700ին գրուած կը զնէ): Պղիս էր նաեւ մեր Սարգիս Եպս.ն Սահէթճի:

Արդ Մելքոն Արք. միաբանեցաւ սոյն երեք եպիսկոպոսներու եւ Լատինաց Ռայմոնտօ Կալանի (1709—1720) Նուիրակ-Եպիսկոպոսին հետ, եւ Գաղղիոյ Comte des Alleurs դեսպանին քով խորհուրդ ըրին 6 Հոկտ. ն. տ. 1714ին, եւ որոշեցին՝ նոյն դեսպանին քով կաթողիկէ Հայերու գաղտնի ժողով մը գումարել, եւ խորհիլ թէ իրենց այս թշուառ վիճակէն եւ հաւածանքներէն ազատելու համար ինչ դարման կարելի է: Ժողովը գումարուեցաւ 22 Հոկտ. ն. տ. 1714 Գաղղիոյ դեսպանատունը, ուր գտնուեցան յիշեալ Եպիսկոպոսներէն զատ՝ Գեսպանն անձամբ, եւ հայկաթողիկէ աշխարհական երեւելիներէն 70 հոգի. եւ որոշեցին որ Եպարքոսին ներկայանան եւ կաթողիկէ Հայերու համար Հայոցմէ անկախ Պատրիարք մը (Մելքոն Արքեպ.ը) եւ եկեղեցի մ'ուզեն, հաւածանքներէ ազատ իրենց կրօնը պաշտելու. առ այս պէտք եղած ծախքերը վճարելու յանձնառութեամբ, որ ըստ հաշուին՝ 12 քսակի չափ պիտի ըլլար: Պալատի մէջ ազդեցիկ Թուրք մ'ալ խոստացաւ այս գործն ի գլուխ հանել եւ փոխարէն 10 քսակ եւ ժամացոյց մը կը խնդրէր: Լատին Արքեպ.ն ամենայն աջակցութիւն խոս-